


ՏՆՕՐԷՆ-ՆՍՐԱԳԻՐ
Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ՆԱՍԱԿ ԿԱՍՐ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՔ Է ՈՒՂՂԵՆ ԱՌ
ԽՈՐԲԱԳՐ. ԱՐՇԱՒԱՅՈՒ ՄԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (Հասպագանիէ)

Rédaction du journal arménien
ARCHA LOUISE
HABDANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿՈՑՈՒ ՆԱՄԱՐ	
Տարեկան, ողջ գահկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան ձրանք	20
Վեցամսեայ »	12

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ ԿԱՆԽԻԿ Է
ԵՒ ԲՂՊԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
ԽՈՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ :

ԽՈՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒՆԱԾ
ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՍ ՀՆԵՆ ՏՐՈՒՐ :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Լեզիէն աւելի դառնագին, անուշէն
աւելի քաղցրագոյն վայրկեաններով օրերով
ու տարիներով հիսուած բաղնաթիւ աստի-
ճաններէ բաղկացած ասնդուխ մը. ահաւա-
սիկ կեանքի շրջանը:

Հոն մանկութիւնը ստորոտն է և ծե-
րութիւնը գագաթը, այդ երկուքին մէջ
երիտասարդութիւնն է որ պէտք է վայրի
լուսաւորեալ գարին բեղմնաւոր ճառա-
գայթեանուն ներքեւ: Երիտասարդութիւնն
է՛ որ իւր քայլափոխները յառաջ մղելով
մանկութեան աստիճաններուն վրայէն պիտի
ուղղահայեաց գիտէ ու գիտէ այն միջոցը,
ուրկէ անցնելով պիտի բոլորէ շրջանը
կեանքին:

Առաջարկներով լի է այն, որոնք թէպէտ
իր քայլերուն հանդիպելով կրնան ճնշել
ու կասեցնել զինք, սակայն իր հասակին
ու զարգացման համեմատութեամբ իրեն
վրայ կը ծանրանայ պարտականութիւն մը.
ա՛յն է՛ ցոյց տալ յառաջդիմութեան ուղին
ամեն անոնց, որոնք սոսնձային զանազա-
նութիւններէ ազատ ուղղակի յարաբերու-
թիւն ունին իրեն հետ:

Հայ զարգացած երիտասարդին համար
մանաւանդ այդ պարտականութիւնը ստանձ-
նել ո՛րչափ մեծ ու վեճմ, նոյնչափ ալ
անհրաժեշտ է:

Այն վայրկեանին երբ անցեալին բացած
խոշոր վերքերուն ցաւերը տակաւին չ'մու-
ցուած ծաղու առարկայ կ'ըլլայ ողբերու
ձայնը և կը հնչէ ականջին, երբ արցունքի
կաթիլներով թրջուած անմեղունակ դէմքեր
կընչմարէ, այս ամենուն առջև հայ զարգացած
երիտասարդը սկզբունքի ամուր ըմբռնումնե-
րով գոտեպնդած, պարզ և յստակ գաղափար-
ներով զինուած, գլխաւոր պարտականութիւն
համարելու է իրեն անդրադառնալ կեանքի
շրջանին առաջին աստիճաններուն վրայ
եղող մանկութեան վիճակը բարեփոխելու
և անոր քայլերը ուղղելու յառաջդիմութեան
շաւղին մէջ:

Ժողովուրդի մը կեանքը, անոր սիրտն
ու հոգին, իրեն մէջ գտնուած երիտասարդ
գասակարգն է: Եթէ երիտասարդութիւնը
տակաւին չ'ծաղկած թոյնի ու խամրի, ու-
րեմն յուսալից ապագայ մը կարելի չէ
սպասել այդ տեսակ ժողովուրդի մը համար

այլ միայն բարոյական և նիւթական ոչնչա-
ցում այն ահեղ խորխորատին մէջ,
որ դարերէ ի վեր բացուած է իրեն առջև
և որուն միակ պատճառ նոյն իսկ ինք եղած
է: Քանի որ մանուկը չէ կրթուած ժամա-
նակի պահանջներուն համեմատ. իսկ տարի-
քոտ գասակարգը չէ ուզած լսել երիտա-
սարդութեան ձայնին և տակաւին կը յա-
մարի չ'լսելու որոշմանը մէջ:

Գաղափարի պայքարը որ ժամանակէ
մը ի վեր թէպէտ տարբեր և երբեմն նոյն
իսկ իրարու հակառակ ուղղութիւններով
սկսած է մեր մէջ, հարկ է որ անընդհատ
չարունակուի, գլխաւոր նպատակակէտ ունե-
նալով միշտ լուսաւորել ժողովուրդը, զար-
գացնել գասակարգները, որուն միջոցաւ
միայն կարելի է սիրոյ և միութեան կապը
հաստատել գասակարգութեանց մէջ. մա-
նաւանդ երբ իւրաքանչիւր ոք իր կարգին
կըմբռնէ թէ ի՞նչ է իր պարտականութիւնը
դէպ ի ազգային համայնքը և ո՞րն է իր
գործունէութեան միջավայրը սոսնձային յա-
ռաջդիմութեան հոսանքը գոյացնելու հա-
մար:

Մեզի ծանօթ ամեն ազգերու մէջ,
հայը միակն է, որուն արդար ձայնը կը
խեղդուի և յառաջդիմանքը ձեռնարկները
կը խափանուին. մինչդեռ ընդհակառակը
քաջաբերութեան ձայներ պէտքէր որ զայն
յառաջ մղէին:

Բայց ինչ անուն տալ երբ յաճախ
հայը հային արգելք ըլլալու համար ամեն
միջոցներ ի գործ դնելու կը ջանայ. այս-
պիսեաց առջև լրջախոհ և ուղղամիտ երի-
տասարդութեան կը մնայ չկասիլ երբէք իր
գործունէութեան շրջանին մէջ: Նոյն իսկ
ամենէն ճշմարիտ սկզբունքները իրենց հա-
կառակորդները ունեցած են: Գաղափարի
կռիւր միշտ և ամենուրեք գոյութիւն ու-
նեցած է ուրեմն ինչո՞ւ վարանում. երբ
սկզբունք մը միշտ վառ մնայ, կը փարատի
տիրապետող սև խաւարը. ուղիղ ճամբան
երեւան կուգայ և ատոնց վախճանն է յա-
ռաջդիմութեան գագաթնակէտը:

Ուրեմն հա՛յ ժողովուրդ, և դու մաս-
նաւորապէս հա՛յ երիտասարդութիւն, եթէ
նոյն իսկ մինչև ցարդ չես նշմարած քու
ձեռքով բացուած լայն խորխորատը, ար-
ձակէ նայուածքդ քիչ մը հեռուն և պիտի
նշմարես զայն: Ինչ որ դու յառաջդիմու-

թեան ճամբայ կանուանես, քու ջոշերդ,
թշնամիներդ պիտի ջանան ամթով սեցած
քարի կոյտերով գոցել, դո՛ւ, երիտասար-
դութիւն, քու կամքի ուժով այնքան անցնիլ
այդ կոյտերուն վրայէն, ոչնչոյ առջև ապ-
շած կը մնայ զանոնք բարձրացողը: Գաղտն
և լրագրութիւն. ահա ժողովուրդի մը յա-
ռաջդիմութեան գլխաւոր միջոցները: Կեան-
քի շրջանը դարձնա՞յ մ'է արդէն ուր ամեն օր
նոր դաս մը կայ սորվելիք. իսկ լրագրու-
թիւնը անոր ուղղիչը պէտք է որ ըլլայ:

Հ. ԱԼԱՏԻՆ

ՍՈՒՑՈՒՄ ԳԱՍՏԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Միջերկրականը յուզուած քորտքած է. իր
ալիքներու փոփոխը, որ սեւամորթ ափրիկեցիի
բարկացած աչքերուն պէս ծովի անեղր կուրծքին
վրայէն հոս ու հոն կը թռչի, իր կակուղ ու հո-
գիի մը անզօր ելեւէջովը շարժուն փորձը որ նպա-
տակազնացի բազմաշարժար մտածու մեղքը մոռցնել
կուտար, հողմուռոյց փութով մը ու ուսած բորբոյնով
է. եւ «Ամազոն» գիտութեան դարավերջիկ հրա-
շալիքը եղող այդ հսկայ մարմինը, իր վրայէն
արձամարտու քրքիչներով կը յառաջանայ:

Ճիշտ այսպէս ծովի մը կերպարանքը առնձ
է այժմ Գահիրէի հայ տարբը. որուն փոփոխ լոր-
ձունքներէն դուրս ցայտող լճացած թուրք միջնա-
դարեան մեծ լիզրի կշիռով կերթայ ինչալ ուխ-
տեալ անպատկաններու երեսին:

Մի զարմանայք. եթէ ժողովրդեան ներկայ
անզոյն կացութիւնը Միջաստղ եւս անզոյն կերպով
ներկայացնելու փորձը կ'ունենայ:

Ճշմարտութիւններ իրողութիւններ կան որոց
կարեւորութիւնը իրենց գոյութեան սահմանէն
անդին պէտք է փնտռել. եթէ ոչ, ո՞վ չ'տեսներ
մեր ժողովրդեան վիճակը. տեղ մը հաշտութիւն
տեղ մը ցասում, երբեմն խաղաղութիւն եւ երբեմն
յուզում. մերթ քաղցրութիւն եւ մերթ կատաղի
փոթորիկ, որոց վրայէն նահապետական փտտած
քեհեհեհ կը սուրայ կանցի մերթ սպանալիքներու
յոխորտանքով մ'ալ. որ, էս թէ կարող ըլլար
պատուել անցնիլ ովկիանոսները . . . :

Ասոնք են ահա արդի իրողութիւնները, որոց
ինչ աստիճանի կարեւորութիւնը յերեւան պիտի
գան բուն իսկ պատճառներէն անդին:

Բայց թէ ժողովրդային աշխարհին մէջ ի՞նչ
պէտ է արդեօք. վաճառականական, ընկերական,
հանրային, կամ անհատական ընկերութեանց պա-
տասխանատու մարմինը կրնա՞յ խղիւղ ձայն մը
որ ուղղակի բղխած ըլլայ միեւնոյն: հաստատու-
թեան ոգին վնասող պատճառներու աղբերակէն:

Ժողովուրդ՝ որ ընկերականութեան կամ եղ-
բայրակցութեան հաւաքական մարմնացումը կը
նշանակէ, կրնա՞յ զրկուիլ այն իրաւունքներէն
որոնք ուղղակի կապ եւ առնչութիւն ունին իր
գոյութեանը հետ. եւ արդ կարելի՞ է փորձել:

ըսելու համար թէ ժողովուրդը սեփական իրաւունքի գիտակցութիւնը ունենալուն մէջ անիրաւ է: Ըստ իս ժողովուրդ մը կրնայ ունենալ պատանի մը անգիտակ խորհուրդներն ու քայլերը, որուն ուղղագնացութիւնը կ'ապահովուի իւր ուղեկցին փորձառութիւնովը: Բայց երբ այդ պատանին երիտասարդի մը լուրջ հայեցողութեանը հասնի, մտածելու դատելու եղանակները ըմբռնուով լուրջ տեսութիւններովը սերտէ, նա այլ եւս իրական ժառանգորդը կրնայ սեպուել այն բոլոր իրաւունքներուն որուն զինքը տէր կացուցած է նոյն ինքն ժողովրդային օրինադիժը: Այդ օրինադիժն հիմնական յօդուածները կը կազմեն Ա. Պարտք Բ. Իրաւունք:

Երբ Գահիրէի ժողովուրդը պարտուց մէջ դէպ յինքն եղած խտուրտութիւնները իւր գազաթնակէտին հասնիլը տեսնէ, ինչո՞ւ պիտի անտեսուին այն ատեն իրաւունքները ա'յն ժողովրդին, որը այժմ լաւ ուսանելու հետամուտ է դատել, կշռել, տրամաբանել մինչեւ վերջը իր պահանջին դէմ յարուցուած կատաղի պայքարին պատահականութիւնները:

Բայց դիտելի է թէ տեղիս հայ ժողովուրդը անյիշատակ ժամանակներէ հետէ անհոգ գտնուած է այնպիսի բաներու մէջ, որոցմէ յառաջ եկած փեսայը ուղղակի կ'ապառնայ իւր իրաւունքի կորստեանն ու խոշտանգումին: Յաճախ կը հետեւի այնպիսի եսասէրներու քայլումովոր գնացքին, որոց աղետաբեր վախճանը արտագրուած արգիւնքէն միայն կարող պիտի ըլլայ գիտնալ: Իրաւ որ մեզ համար ամենէն աղետաբերն է այս, յառաջդիմութեան նախանձախնդիր ժողովրդի մը սեւ արատը ու կործանարար խրատելակը:

Բայց թէ երբ ժողովուրդի մը իրաւունքէն զրկուելու պատճառները ոչ մի բանով չ'բացատրուիր, կարելի՞ է ճանչնալ, ընդունիլ, զինքը ներկայացնող մարմնոյն կամ իշխանութեան գոյութիւնը:

Մերը չէ՞ Եկեղեցին, Դպրոցը, Առաջնորդարանը բարն ու բանկալը, գոցն ու գանձանակը:

Ինչ տարրերէ պէտք է կազմուած ըլլայ այդ իշխանութիւնը եւ ո՞վ այդ մարմինը որպիսին իր աւանդ ընծայուած նուիրականութիւնը իր փառասէր կրթին ծառայեցնելու համար ժողովրդի ջերմ համբոյրը Յուգայի դերով փոխարինելու ցած հոգի մտածումը յղացած յառաջ երթայ:

Հուրէն, սուրէն, տառապանքէն փախած ժողովրդի մը սրտին դէմ լարուած մարդկային մտածումի ալ ամենատուր նշարակը համարելու է այս, յորմէ պոռթկացած արիւնը գուցէ տանի մեզ համբերութեան մինչեւ վերջակէտը, ու այս ամենը ազգափնաւ, եղբայրասպան ու գաւաճան Օրմանեանի մը համար:

Իշխանութեան մը յամառ մտքին ինչո՞ւ աւելի հաճելի կ'երեւայ արգեօք Օրմանեանի մը անուան շուրջ դառնալով միւր Ազգային Կրթական Ինդըսթրի կարեւորութիւնը մոռնալ ու երեսի վրայ թողուլ:

Սզգային ո եւ է գործերով եւ այնքան հետաքրքիր ըլլալու պէտքը չունիմ, որքան կրթական ամենակարեւոր հարցով:

« Արշալոյս » ի մէջ համակրելի թղթակցի մը Դպրոցի վիճակին վրայ ըրած լուրջ եւ ստոյգ տեսութեանէն յետոյ, մինչեւ ց'արդ ո' եւ է պղտիկ փոփոխութիւն իսկ տեսնուած չէ մեր լուսոյ վառարանին մէջ:

Ազգային Կրթական Ինդըսթրի միակ հոգատարը, որուն հայերէն լեզուին բոլորովին անծանօթ ըլլալը արժանի է շատ մը մեղադրանաց, զարմանալի է որ ընդարձակ թոյլտուութիւն կը վայելէ եւ նոյն իսկ վերաւորանք կը համարուի նոր եւ արժանաւոր Կրթական տեսչութեան մը վերակազմութիւնը, ո՞վ կրնայ արգեօք հանգուրթել այնքան անողորմ փնասուց, նոյն իսկ մեր մատաղ սերունդեան դէմ, որոյ ապագայ բարօրութեան կենսական կարեւորութիւնը կախում ունի այդ հաստատութեան բարեօք կառավարութեանէն:

Բայց ամէն բանէ յառաջ մտած, տեսած ու քննած էք այդ հաստատութիւնը իր ներքին պարունակութեամբ: Կամայակատարութիւնը իւր վերին կատարելութեանը հասած եւ տիրապետողի կամքին զոհուած է ամեն ինչ, Օրէնք, պարտք, խիղճ եւլն:

Տեսութիւն, անօրէնութիւն եւ դատաստուաց համերաշխ միութիւն (սուս ըլլալու մէջ) այս բոլորը միութիւն մը կազմած են դպրոցը պահելու համար իւր նոյնութեանը մէջ առանց ո եւ է իրական օգտի եւ յառաջդիմութեան, որուն միակ ապացոյցը եւ պերճախօս վկայութիւնը կը տեսնուի դաս մը հայերու մէջ, որոնք կը յանձնեն իրենց զաւակունքը օտարներու դպրոցին ու հոգածութեանը:

Ո՞վ է մեղաւորը, ժողովուրդը, թէ մեծ աղան: Աղքատը թէ աղքատացնողը: Տեղը չէ՞ հիմակ ըսել. ջոջ աղային'ր. Հերիք չէ՞ ըրածնիդ:

ՄԻՖԱՍՕԼ

Գահիրէ, 29 հոկտ. 99

ԵՐՈՊՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

Բարիք 20 Հոկտ. 99

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՆԳՂԻԱ

Այս միջոցիս երկու հոսանք երևան կուգայ Գերմանական քաղաքականութեան մէջ Անգղիոյ և Թրանսվալի մասին: Ոմանք կուզեն որ Մեծն Բրիտանիոյ տարտամեալ վիճակէն օգտուելով անոր սուղի նստեցնեն այդ խնդիրն սխալմամբ չեզոքութեամբ մը: Ուրիշներ ընդհակառակն յիշելով Անգղիացոց վարուելու կերպն ի Խրիմ, ի Մեքսիկա, յԱփրիկէ և վերջապէս ամբողջ աշխարհի մէջ, կըսեն թէ Գերմանիա անտարբեր մնալու չէ:

Այս հակասութիւնը նոյն իսկ կառավարական շրջաններու մէջ ալ կերևայ. վասն զի ժամէ ժամ լուր կը տարածուի թէ կիլիսոմ Կայսրն առաջիկայ ամիս Անգղիա պիտի երթայ և յետոյ լուր կը տարածուի թէ այդ ճամբորդութիւնն մէկ դի թողուծ է:

Իուցէ այդ տատանման պատճառն պիտի տեսնենք երբ կարդանք Կայսեր այն ճառն որ խօսեցաւ ի Համպուրկ Կառոյտ Մեծն գրահաւորին ծով իջեցնելու օրն «Եթէ հակառակ իմ աղաչանաց, պնդումներուս և աղքարարութեանց ինձ չ'մերժէին պէտք եղած դրամն՝ մեր նաւատորմին վերակազմելու համար, բոլորովին ուրիշ կարեւորութիւն մը նա կարող էր տալ մեր արդէն ծաղկած վաճառականութեան և մեր այն շահերուն զորս ծովերէն անդին ունինք:

Եւ արդէն ի նպաստ Թրանսվալի միջամտութիւն մը կարեւորութիւն պիտի ունենար միայն այն ժամանակ երբ մեր պետութեանց կողմէն լինէր: Արդ եթէ բոլոր պետութիւններն նպաստաւոր կերեւան Պօէրներուն համար, սակայն ոչ ոք վստահութիւն ունի իր գրացոյցն վրայ և իւրաքանչիւրն կը վախնայ որ գործին մէջ մտնելէն յետոյ առանձին մնայ ուրիշներէն ըրուելով: Անգղիացիք որ շատ լաւ գիտեն գիււանագիտութեան այս վիճակը և որք կը ջանան զայն նոյն վիճակին մէջ պահել, անկէ կ'օգտուին »:

23 հոկտ. 99

ԿԼԷՆԳՕԷ-ՏՈՒՆՏԷԻ ԽՆԻՒՐԸ

Կլէնքօէ-Տունտէի խնդրոյն մէջ Անգղիացոց խոստովանած կորուստներն այնչափ

շատ են, որ Լոնտոնի Մամուլին յաղթական երգերն աւելի քան ցաւալի ազդեցութիւն մը կ'ընէ:

Գրեթէ 300 անձինք պատերազմելու անկարող դատուած են, այսինքն 100ին 10ը և առնց մէջ յիսուսի չափ սպայներ: Ամբողջ ջոկաներ բոլորովին կորսուած են: King's Royal Rifle ի 14 սպայներէն տասն և մէկը ծանրապէս վիրաւորուած են. իրաւ այդ կ'ապացուցանէ թէ այդ ճէնթլմէնները ամէն ջանք ըրած են իրենց մարդիկն (զօրքերը) առաջ քշելու, այս կապացուցանէ նաև թէ այդ զօրքերն պէտք ունէին առաջ քշուելու:

Եթէ այս գործն հետեւալ օր մը չունենար, անտարակոյս նա կարեւոր յաղթութիւն մը պիտի լինէր:

Սակայն Պօէրներն զորս յաղթուած կը կարծէին տարօրինակ քաջութիւն մը և ճարպիկութիւն ունին, որովհետեւ տեղի տուին քանի մը ժամէ յետոյ յարձակողական դիրք մը բռնելու համար և պաշարելու կլէնքօի բանակն, որուն Սիմոն զօրավարն կը կարծէր թէ երկար ժամանակի համար հեռացուցեր էր Պօէրներն:

Անտարակուսելի է որ եթէ մենք կարենայինք անգղիական հեռագրերու քով դնել Պօէրներէն եկող լուրերն, շատ մը բաներ պիտի բացատրուէին. այժմ մութ են: Մենք պիտի գիտնայինք զոր օրինակ թէ ի՞նչ եղած են 18րդ զօրաբանակի հիւսարտներն, որոնք Պօէրներու վրայ յարձակեցան կլէնքօէն յետոյ: Մենք կրնանք նոյնպէս գնահատել Լանկալիթի պատերազմի կարեւորութիւնն. ինչ որ մինակ անգղիական տեղեկութիւններէն կերեւայ, նախալի մէջ Պօէրներու յարձակումն լաւ կազմակերպուած չէր, եւ եթէ անոնց թնթանթնաձիգ բանակն ստորին կը գտնուէր, այդ զիրենք չարգիլեց Հուայթ (White) զօրաբանակն Լէյտիսմիթի գծին վրայ քշելու:

Գալով Մաֆլինի (Թրանսվալի արեւմտեան սահմանին վրայ) ութ օրէ ի վեր որոշ տեղեկութիւն մը ստացուած չէ, յայտնի է թէ Անգղիացիք չպիտի փութան պարտութիւն մը յայտարարել այդ մասին:

Պօէրներն վերջ ի վերջոյ բոլորովին պիտի ջախջախուին, այս մասին բնաւ կարելի չէ կասկած ունենալ: Երկու հարիւր հազար գիւղացիներ երկար ժամանակ չեն կրնար գիմադրել Բրիտանական Կայսրութեան զօրութեանց: Սակայն այդ մեզ չ'արգիլեր մտածելու որ Պօէրներու վրայ դրուած պատերազմելու պարտքն վերին աստիճանի անարդար եւ զզուելի է:

Այդ մարդասպանութիւնը որ կը գործուի ամբողջ մի ժողովրդի վրայ ԺԹ. դարու վերջերն, պէտք է մտածել տայ բոլոր ազգերուն թէ, կան աշխարհիս մէջ ցեղեր, որոց միակ նպատակն է ուրիշ ցեղերն լափել, ոչնչացնել, և որոց դէմ պէտք է հարկաւոր միջոցներն ձեռք առնուլ: Ժամանակ է որ Եւրոպա ասոր վրայ մտածէ:

A. S. և Մ. Ս. ԴԱԻԹ-ԲԷԿ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Բազմալեզու Նոյեմբեր ամսաթուոյն « Ազգային արձագանք » թատիկն մէջ Ռուսահայոց կողմէ կղած նուիրատուութեանց

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ

ՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ
Ի ՏԱՎՈՒՑԻՑԻ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ
երեկոյնները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի
աւանդուին Անգղ. Գաղղ. Արաբերէն և Հա-
յերէն դասեր:

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-
Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Յոռօքի Պափ վանառասան մօտեր, Կաւկ-էլ-Պեմաթի
ճիւղի դիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս
իրենց նոր բացած փոռին մէջ, անխորհրդաւ ա-
լիւքէ կը պատրաստուի ԳԱՂՂԻԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱ-
ԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուր-
ճի, թէյի եւ կաթի պարսիականներ, եւայլն:
Եկաւօք եւ ընկերութիւն մեծ ջանք եւ
հոգածութիւն պիտի ունենան իրենց դիմող բոլոր
յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու:
Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ
եւ փութով կը կատարուին: 12 - 50

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐԶՊԱՆԵԱՆ
ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Իւր գործատեղին հաստատած է Ապ-
տինի պալատին ճիշդ շրջանի փողոցը, Շա-
րա-էլ-Պոսթան թիւ 7 տան մէջ:

Ամենէն գոյաւարահաններն անգամ գո-
հացնելու պայմանաւ կ'արդուկէ շապիկներ
և այն ամեն զգեստեղէններն, որոց համար
արդուկի պէտքը կ'զգացուի:

Ատոնցմէ զատ ունի նաեւ լուացարա-
րութեան յատուկ ճիւղ մը, ուր՝ իրեն դի-
մող յաճախորդներուն ճերմակեղէններն
զատ զատ լուալու գովելի դրութիւնը հաս-
տատած է:

Յաճախորդներուն դիւրութիւն ընծա-
յելու նպատակաւ ճերմակեղէններն ինք
անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի
վերադարձունէ որոշեալ ժամանակին:

ԳԻՆԵՐԸ ԶԱՓԱԻՈՐ ԵՒ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ
7-8

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ
ՄԱՆԿԱԲԱՐՉ

Վկայեալ ճեղական կառավարութեան եւ
բժշկական վարժարանին

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա
Ապա-իւ-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին
դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկու-
թեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական
կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակ-
ցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի
մնան: 15-24

ԼԵՒՈՆ ԿԻՄԻՒՅԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՃԻՐԷ, - Մուսի փողոց, - Գ.Ա.ՃԻՐԷ
Ս. ԵՒ Ս. ՍԵՏԱՎԻԻ վանառասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ
կը գտնուի պատի եւ քօնսօլի ընտիր տե-
սակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճա-
շակի յարմար զանազան տեսակ արանց եւ կա-
նանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, աւ-
ծաք եւ նիւթ:

Յրանսական եւ ամերիկեան ապրանքամե-
նաբնտիր տեսակներէն զարդեղէններ, շորքներ,
օղեր, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն
կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն
ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

28-50

ՏՕՐՔԻՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՍՏՄԵՆԱԲՈՅԺ
Ապսին, Շարե Գուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակռաներ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակռայի ցա-
ւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր
պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակռաներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ: 3 7-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայրեի Սանիթի ճիւղի դիմաց

Ամենաբնտիր ապրանքներէ կը պատրաստէ
խիտ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկ-
ներ, արանց, կանանց եւ աղայոց համար:

Գինները չափաւոր եւ աժան:
Փորձ մը միայնիք բաւէ: 20-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ի Գ.Ա.ՃԻՐԷ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր
առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր
Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և
տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր,
Դիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տուներ, Ընկերադրեանց եւ
վաճառականներու սպագրական ամեն պիտոյցներ:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոս-
տանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան,
ճշգրտագրութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրիպտոսի ո եւ է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները
ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Le Gérant Dr A. S. HAGOPIAN

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ

Պազար Մուրուր թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը
Շարա Միւզէյինէն փոխադրած է ի Պազար Մու-
րուր: Յրանսական նորաձեւութեանց յար եւ նը-
ման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած
հմտութեամբը մինչև ցարդ գոհ ըրած է իրեն դի-
մող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունու-
թիւնն երբէք տարակոյս չ'վերցնելու:

Իրեն եղած յանձնարարութիւնք ո'չ միայն
չափաւոր գներով, այլ և փութով եւ մեծ խնա-
մով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ
և կոշտերէ (նասրը) ազատ մնալ: 23-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՑ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազիկ ներկ
(բաստրէ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող:
Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս
ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մա-
զերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ)
գլուխները մազ կը բերէ: 17 տարուան ճա-
ղատ գլուխներու վրայ փորձուած և հիա-
նալի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զրշ.
ողջ (2 ֆրանք):

Ճերմկցնող ջուր շիշով, որը մարմնոյն
բնական սպիտակութիւն կորստայ առանց
զգացնելու: Եզրիպտոսի մէջ միակը:

Ակռայի փոշի և ջուր. մին մաքուր և
ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ
պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինքն ո-
րոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ
տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու
վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխա-
նակենք բոլոր ազգաց գործածած նամա-
կադրոշմները: 3 8-8